

ԱՄՍԷ-ԱՄԻՍ

ՓՐԱՆՍԱ

ՓԱՐԻՉԻ ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՄԻՈՒ-
ԹԻՒՆԸ իր վերջին նիստը դումարեց
նոյեմբեր 17-ին: Նախորդ նիստին
ատենադուրբիւնը վաւերացուելէ ետք,
նախադահը՝ Գ. Կ. Յ. Բասմաշեան կող-
ըբաւ Միւլթեան անդամներուն իրենց
նիւթական և բարոյական լայն աջակ-
ցութիւնը բերել Հայաստանի աղէտեալ-
ներուն օգնութեան դործին: Յետոյ բժ-
եցուանդ Պաթմասեան (Սուտանէն)
դաստիարակութիւն մը ըրաւ — միզա —
բարբառ — մաղձային տենդի մասին
Mèvre hemoglobiniurique, black-water fever
որ ընդհանրապէս հասարակածային և
ընթացող երկիրներու մէջ կը տեսնուի:
Ոմանք կը կարծեն թէ մալարիայի մէկ
բարդութիւնն է, իսկ ուրիշներ մեծ
չափով առնուած քինինի արդիւնք:
Դասախօսը, որ առիթը ունեցած է մօտէն
ուսումնասիրելու նոյնատեսակ բազմա-
թիւ պարազաններ, կը խորհի թէ այդ
տենդը առանձին հիւանդութիւն է և
ունի իր յատուկ միջբողբ որ սակայն
դեռ դանդաղ է: Ներկայներուն միջև
այս խնդրին շուրջ շահեկան վիճարա-
նութիւններ տեղի ունեցան:

ՓԱՐԻՉԻ ՄԷՋ ՄԱՀԵՐՈՒ ԹԻՒՆԸ
սկսած է աւելնալ: Ասիկա ցոյց կուտայ
թէ հիւանդութիւնները այս տարի շատ
աւելցած են: Սակայն մտահոգիչ է այն
պարագան որ սոլորական հիւանդու-
թիւններէ զատ, ժանտատենդի (թիֆո)
համաճարակ մը սկսած է ծայր տալ:
Վերջին տասը օրուայ ընթացքին պա-
տահած են 122 պարազայ (սոլորական

միջինը՝ 20), որոնցմէ 12 մեռած են:
Կապուտ հաղը, ծաղկախտը և հարստ-
նիթը պահած են: Կեղծ մաշկէ վա-
րակուած են 100 հոգի, որոնցմէ 5-ը
մեռած են: Թոքախտէն և թոքային
զանազան հիւանդութիւններէ մեռած են
380, որտի հիւանդութիւններէ 117 և
բաղջկեղէ՝ 112 հոգի:

ՃԱՆՏԱՏԵՆԴԻ ՕԴԷՄ ՊԱՏՈՒԱՍ-
ՏՈՒՄԸ պարտաւորէր դարձնելու Համար
օրինադէմ մը ներկայացուեցաւ Քրան-
սական պարլամենտին:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՇԻՐԱԿԻ ԱՂԷՏԵԱԼ ՎԱՅՐԵՐՈՒՆ
մէջ քօլերայի համաճարակի ծագման
լուրերը բարբախտաբար հերքուեցան:
Այսուհանդերձ ցուրտին և զանազան
զրկանքներու հետեանքով մանուկներու
մէջ մահացութիւնը մտահոգիչ հանդա-
մանք ստացած է:

ՇԻՐԱԿԻ ԱՂԷՏԸ իմանալով, Շի-
բակոյն բժիշկներ դիմած են Նպաստա-
մատոյցին, առաջարկելով որ կամաւոր
արձանադրէ զիրենք և անմիջապէս
Հայաստան ղրկէ, աղէտեալ ժողովուր-
դին ծառայելու համար:

ՇԻՐԱԿԻ ԱՂԷՏԵԱԼՆԵՐՈՒ ՕԳ-
ՆՈՒԹԵԱՆ Փարիզի Կեղըրոնական Հան-
դանակիէ Յանձնախումբը որոշեց առա-
ջին առթիւ զնել 80,000 Քրանքի
դեղօրեայք: Ասոնց զնումները պիտի
կատարուին Հայաստանի Կ. Պաշի
նախադահ ԲԺ. Կամարականի ստացած
ցուցակին համաձայն: